ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

(1886-1908)



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Բանաստեղծի հորեղբորորդի *Զարմայր Մեծապուրյանը* հիշում է. «Միսաք ալ շատ կախորժեր հեքիաթներեն, մին էր անոնցմե, որ թախանձագին կը խնդրեին, կստիպեին հեքիաթ մ'ըսել: Մամիկը քիչ մը նազ ընելե հետո կսկսեր. «Կար ու չկար, ժամանակին թագավոր մը կար» և այլն: Միսաք աչք–ականջ կտրած մտիկ կըներ: Երբ պատմությունը կը վերջանար, երկրորդ մը, երրորդ մը կուզեին: Այդ պատմությունները, ո՞վ գիտե, քանի անգամ կրկնված, գոց (անգիր) կը սորվեր, ու երբ դարձյալ մամիկը զանոնք պատմելու ատեն սխալ մ'ըներ կամ պատմվածքին կարգը շրջեր, կը միջամտեր, կուղղեր»:

ՁՎԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Կեդրոնական վարժարանում ամենատարբեր հետաքրքրություն-ների տեր ընկերներին միավորում էր աշակերտական առօրյան, որ լի էր կատակներով ու չարաճճիություններով: Ահա երկու պատմություն:

Ընկերները հիշում են, որ Միսաքը սիրում էր հագնվել շատ մաքուր և խնամքով: «Չափազանց և նույնիսկ վերջին ծայր բծախնդիր էր մաքրասիրության. իր հագուստներուն վրա փոշիի բիծ մը չպիտի գտնվեր. կոկիկ պիտի հագներ, ձերմակ ու մաքուր»,- վկայել է նաև մայրը: «Օր մը,- հիշում է դասարանցիներից մեկը,- Կեդրոնականի մեջ իր նստած տեղը հավկիթ կը դնեն ու հազիվ վրան նստած՝ ձերմակ հագուստը ամբողջը կը դեղնի. հուզումը սարսափելի կըլլա, ու ժամե-րով կարտասվե»:

Միսաքն առհասարակ չի սիրել ձու և պանիր ու չի մոտեցել սե-ղանին, եթե տեսել է դրանք: Այդ իմանալով՝ ընկերները մի անգամ դպրոցական ճաշարանում նրան հատկացված պաքսիմատները կատակով փոխարինում են ձվով ու պանրով: «Երբ Մեծարենց ճաշի իջնելուն պանիրը տեսավ, հուզումեն սկսավ դողալ ու քանի մը օր ճաշարան չիջավ. ընկերները պաքսիմատները իրեն կը տանեին վեր»,- հիշում է Հակոբ Սիրունին:

ՍԻՐԵՐԳ

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին...:

Համբույրնէր կու գան հովէն ու ծովէն,
Համբույր՝ լույսէն, որ չորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր Տոն է հոգւոյս՝ Կիրակի,
Համբույրնէր կու գան հովէն ու ծովէն :

Բայց լույսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի,
Շրթունքս են ծարավ միակ համբույրին...:
Ցնծագին գիշերն է լույս ու լուսին՝
Բայց լույսն իմ հոգւոյս քիչ-քիչ կը մաշի...:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(սոնետ)

Փթթեցե՛ք միշտ, դեղին վարդեր, լքվա՜ծ վարդեր,
Խորհրդանիշն առանձնացած հոգիներու.
Միշտ կը հուզեք դուք իմ հոգիս խռովքով մ’աղու,
Անհուսության դալուկն հագած տժգույն վարդեր:

Անհուսության դալուկն հագած տժգո՛ւյն վարդեր,
Ձձեզ հավետ պիտի սիրեմ ես սրտագին.
Ու միշտ սիրել պիտի չուզե իմ դառն հոգին
Կարմիր ու ձյուն ձերմակ վարդերն ուրախաբեր:

Կարմիր ու ձյուն ձերմակ վարդերն ուրախաբեր,
– Սուր հեգնանք մը ցավով ճմլած հոգիներու,
Ինծի երբեք անույշ հրապույր մը չեն ազդեր...
– Կույս ու զվարթ երանությամբ օծված վարդեր,
Երգեցե՛ք միշտ ընկճվածի երգերն աղու,
Լքված հոգվոց դուք մըտերիմ, տժգո՛ւյն վարդեր: